

ՆՈՐ ՄԱՐՏԱՏՐԱՎԵՐՆԵՐ*

**ԲՐՈՒԿԼԻՆՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԵՂԾ «ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՈՒՆ»**

«Փորձեցեք ամեն ինչ, բարին ամուր պահեցեք,
հեռու մնացեք բոլոր չար բաներից»:

Ա. Թևադ. Ե. 21-22

Վերջերս մեզանում՝ Նայասարանում հայտնվեց «Աստվածաշունչ» վերաբառությամբ մի գիրք՝ բրուկլինյան կազմակերպության «Նոր աշխարհի թարգմանություն» վերնագրով: Նավահարար հայերեն լեզվով այդ գրքի հրապարակիչները անբեղյակ են, որ «Աստվածաշունչ» վերնագիրը Ս. Գրքին տրվել է միայն հայերենում, ելնելով Բ. Տիմ. Գ. 16 համարից եւ, բնական է, որ այդ պարագայում վերնագիրը պիտի համապատասխանի Բ. Տիմ. Գ. 16 համարին: Այդպես է հայերեն թարգմանություններում, ինչպես գրաբարում, այնպես եւ աշխարհաբարում: Գրաբարում ունենք. «Ամենայն Գիրք աստուածաշունչք եւ օգրակարք ի վարդապետութիւն են», իսկ աշխարհաբարում՝ «Աստծու շնչով գրված ամեն գիրք օգրակար է ուսուցման»: Մինչդեռ բրուկլինյան գրքում կարդում ենք. «Ամբողջ Գիրքը ներշնչված է Աստծուց», այսինքն՝ այդ դեպքում գրքի վերնագիրը պիտի լիներ՝ «Աստծուց ներշնչված» կամ գոնե պիտի օգրագործեին մյուս լեզուներին բնորոշ հունարեն Բիբլիա բառը:

Թվում է թե սա մի փոքրիկ վրիպում է, բայց իրականում միտումնավոր թույլ տրված աղավաղում է:

Նիսուսի փորձությունների դրվագում՝ Մարթեոսի Ավերարանում, փորձիչը երեք անգամ է մոտենում Նիսուսին. առաջին եւ երկրորդ փորձության մեջ Նիսուսի պատասխանն է. «Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ ...», «Գրված է՝ քո Տեր Աստծուն պիտի չփորձես...»: Փորձիչը կարծում էր, թե ինքն աննկար եւ անճանաչելի է մնացել, բայց հաջորդ փորձության մեջ հեղինակում է Նիսուսի պատասխանը. «Երեսու գնա, սաքանա, որովհետեւ գրված է...»: Այս երրորդ փորձության ժամանակ Նիսուս արդեն նրան դիմում է անունով՝ «Երեսու գնա, սաքանա...»: Ինչ ձեռով էլ նա մոտենար Նիսուսին, ինչքան էլ թողարկեր իր ով լինելը, միևնույն է «չկա ծածուկ բան որ չհայտնվի եւ գաղտնի բան, որ չիմացվի»: Այդպես է բրուկլինյան թարգմանիչներն են. հնարավոր չէ թաքցնել նրանց դիտարկությունները, որոնք անգամ սկսած փոքրամասնությանից ի հայտ են գալիս: Նրանց դավանանքով «Աստծու շունչ» գոյություն չունի: Քանի որ եթե «Աստծու շունչ» գոյություն ունենար, ապա Աստծու պարկերով եւ նմանությամբ սրբազան մարդն էլ այդ «շունչը»՝ այսինքն հոգին կունենար: Դա արդեն անընդունելի է նրանց կողմից, քանի որ նրանց դավանանքով մարդն հոգի չունի, իսկ ինչ որ ունի հոգու նման՝ շունչը, դա էլ մեռնող է, ոչնչանում է մարմնի մահվամբ:

Ծննդոց Ա. 2-ը գոյություն ունեցող բոլոր հրապարակություններում (ոչ միայն հայերեն) հնչում է այսպես. «Աստծու հոգին շրջում էր ջրերի վրա...»: Այդ «հոգուց» ազատվելու հա-

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Գ. համարներում:

մար բրուկլինյան հրապարակիչները այդ համարը թարգմանել են. «Աստծու գործուն ուժը շրջում էր ջրերի վրա»²: Մինչդեռ թե՛ երբայական տերապիան և թե՛ հունարենում (Յոթանասնից թարգմանության մեջ) գրվում ենք.

καὶ πνεῦμα θεοῦ ἐπεφύετο ἐπάνω τοῦ ὕδατος

וְהָיָה רցּחַ הַקֹּדֶשׁ מְפַלְפֵּל עַל הַמָּיִם

Ինչպես տեսնում ենք ընդգծված բառերը՝ «Աստծու հոգի»-ն, առկա են թե՛ երբայական, թե՛ հունարեն բնագրերում և այն անհնար է թարգմանել որպես **գործուն ուժ**: Մա այն սկզբունքային մոտեցումն է, որ բնորոշ է բրուկլինյան հրապարակությանը: Բրուկլինյան թարգմանիչներն ամեն կերպ փորձում են «ստեղծել» մի գիրք, ուր ներկայացված լինեն իրենց դավանանքին բնորոշ գծերը: Եւ դա անում են ամեն տեղ, ամեն առիթով:

Նամաձայն նրանց դավանանքի, Տիտուս Քրիստոսը հրեշտակ է, միակ Աստված Եհովայի առաջին ստեղծագործությունը, որի միջոցով և Եհովան ստեղծել է մնացած ամեն ինչ: Առաջ գնալով, նրանք ճշտում են նաև այդ հրեշտակի անունը՝ Միքայել: Տիտուս մինչ մարդեղացումը՝ երկնքից իջնելը և դարձյալ երկինք գնալը՝ Միքայել հրեշտակն էր և է: Նենց այդ հրեշտակի միջոցով էլ Եհովան արարեց մնացած ամեն ինչ՝ Տիեզերքը և նրանում եղող ամեն բան:

Եւ այս ամենը, բրուկլինյան հրապարակիչները ներկայացնում են, որպես սուրբգրային ճշմարտություններ:

Բայց այդպե՛ս է արդյոք:

Եթե Տիտուս իրոք ստեղծված՝ այսինքն արարված է եղել, ապա նշանակում է, որ նա ինչ-որ մի ժամանակ չի եղել, հետևաբար, համաձայն Նովիանուսի «Ամեն ինչ նրանով եղավ. և առանց նրան չեղավ ոչինչ, որ եղել է» (Ա. 2) Տիտուս մասնակից է եղել իր իսկ ստեղծմանը, իսկ սա nonsense է: Եսային Նրա՝ Տիտուսի կոչումների մեջ Նրան տալիս է՝ «Հավիտենականության Հայր»⁴ անվանումը, իսկ այդ սահմանումը բացառում է նրա՝ Տիտուսի սկիզբը ժամանակի մեջ:

Բրուկլինյան կազմակերպությունը հետաքրքիր ձևով ներկայացնում է Տիտուսի կենսագրականը, նրան նույնացնելով Հայրության Թ. 1-12 հրեշտակի հետ:

«Հայրության Թ. 1-12 հարվածը նույնպես ասում է մորեխների հարձակման մասին, որոնց ուղարկել էր Եհովան «թագավորի, անդունդի հրեշտակի» միջոցով, որն Տիտուս Քրիստոսն է» («Դիտարան», 1 մայիսի 1992, էջ 11):

Սովորական հրեշտակը, Անդունդի հրեշտակը, ահա Տիտոսը, որն այնքան մեծ չէ, սովորական հրեշտակ է: Բայց այդ պաշտոնը բրուկլինյան իշխանների համար փոքր է թվում, և նրանք նրան՝ Տիտուսին, բարձրացնում են հասարիքային սանդղակով, հայտարարելով, որ նա «Միքայել հրեշտակապետն» է («Դիտարան», 15 ապրիլ 1991, էջ 28):

Դանիելի գրքում Միքայելի մասին հիշատակություն կա. «Պարսից թագավորության մի իշխան հակառակվում էր ինձ քսանմեկ օր, և ահա Միքայելը՝ ավագ իշխաններից մեկը,

2 «Աստվաշառն», Նոր աշխարհ թարգմանություն, New World Translation of the Holy Scriptures, Armenian, 2010, էջ 11, հետադարձ՝ ՆԱԹ:

3 Ընդգծումները մերն են:

4 Եբրայերենում՝ אֲבִי־אֱלֹהִים - abiod Հայր հավիտենականության, միայն ՆԱԹ-ում՝ Հավերժական Հայր սխալ ձևը, որն երկիմաստություն ունի. կարելի է և հասկանալ բրուկլինյան իմաստով:

եկավ օգնելու ինձ»։ Բրուկլինյան հրապարակության մեջ այս համարը նույնն է, այսինքն, ընդգծված բառը հոգնակի թիվ ունի, իսկ դա նշանակում է, որ Միքայելը այդ աստիճանակարգում անգամ շարերից մեկն է միայն։ Նավանաբար այս նկարի ունենալով է, որ «Դիպարանը» հայտարարում է. «1914 թվականին երկնային գինվոր Նիսուսը դարձավ Թագավոր... («Դիպարան», 1 նոյեմբեր 1993, էջ 23)։ Զինվորական կոչումն էլ չուշացավ, Նիսուսին սկսեցին «Դիպարանի» էջերում պարկերեկ հեծյալի կերպարով՝ ձեռքին մի մեծ թուր, և անվանեցին «Ֆելդմարշալ Նիսուս»։

Այս է բրուկլինյան «Նիսուս-Միքայել»-ը։

Ավելին, իրենց հրապարակած գրքերից մեկում նշում են. «Աստվածաշնչում որոշ անհայտներ երբեմն ներկայացվում են մեկից ավելի անուններով։ Օրինակ՝ Նակոր նահապետը հայրնի էր նաև Իսրայել անունով, իսկ Պեպրոս առաքյալը՝ Սիմոն անունով (Ծննդոց ԽԹ. 1, 2, Մարթեոս Ժ. 2)։ Նույն ձևով էլ, **Աստվածաշնչում նշվում է, որ Միքայելը Նիսուս Բրիսպոսի մեկ ուրիշ անունն է**, որ նա ունեցել է երկնքում՝ երկրի վրա ապրելուց առաջ ևս երկինք վերադառնալուց հետո»⁵։

Մինչդեռ Աստվածաշնչում նման համար չկա «նշված», ինչքան էլ փնտրեք. եթե լինեք անպայման նրանք կնշեին այդ տեղը։ Նակոր-Իսրայել, Պեպրոս-Սիմոն իրոք կա ևս նշված է, իսկ այնքան կարևոր «Միքայել-Նիսուս»-ի մասին չկա նշված տեղը։ Ընդ որում բերված համարները բացառում են, թե ինչո՞ւ է փոխվում անունը. դա հուշում է տեքստը, և ոչ թե պրամարանությունը։ Բերված օրինակներն էլ հիմնավոր չեն «Միքայել-Նիսուս»-ի փոխակերպությունը բացառելու համար, քանի որ «Նակոր-Իսրայել, Պեպրոս-Սիմոն» փոխակերպությունը չի փոխում անհատի ֆիզիկական էությունը, մինչդեռ «Միքայել-Նիսուս»-ը բնության, էության, որակի փոփոխություն է ենթադրում։

«Աստվածաշնչում նշում է նաև, որ «Միքայելը ևս նորա հրեշտակները պարերագմեցին վիշապի դեմ, և ...[նրա] գործեր[ի դեմ]» (Յայար. ԺԲ. 7)։ Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Միքայելը հավաքարիմ հրեշտակներից բաղկացած գործերի առաջնորդն է։ «Նայարնության» գրքում նաև Նիսուսն է նկարագրվում որպես հավաքարիմ հրեշտակների բանակի Առաջնորդ (Յայար. ԺԹ. 14-16)։ Ուրեմն պրամարանական է եզրակացնել, որ Միքայելը նույն ինքը Նիսուս Բրիսպոսն է՝ երկնքում իր դերը կատարելիս»⁶։

Այստեղ էլ հակասությունն առկա է. նույն այդ համարում (Յայար. ԺԹ. 16) Նիսուս ներկայացված է «Թագավոր թագավորների և Տեր տերերի», որը բացառում է Միքայել հրեշտակապետի պարագան։

Նկատ, ինչպես նշեցինք վերևում, Միքայելը «ավագ իշխաններից մեկն» էր, որը բացառում է նրա՝ երկնքում «Միածին» լինելը, որը տրված է միայն Նիսուսին⁷։ Միածին լինելը առաջին հերթին նշանակում է եզակիություն, իր տեսակի մեջ միակ։ Եւ Ս. Գրքում ոչ մի տեղ չի ասվում որ Բրիսպոս «ավագ իշխան» էր։ Եբր. Ա. 5-ը բացառում է ցանկացած հրեշտակի «Աստծո Որդի» կոչվելը⁸։

5 «Ի՞նչ է սովորեցնում Աստվածաշնչը իրականում», Նյու-Յորք, Բրուկլին, 2006, հայերեն, էջ 218։

6 Անդ, էջ 219։

7 Յովի. Գ. 16։

8 Ավելի մանրամասն տե՛ս **Рон Родес**, Вразрез со священным писанием, Минск, 1998, էջ 70։

Ս. Գիրքը Նիսուսին հռչակում է անփոփոխ, «երեկ, այսօր, հավիտյան»⁹, այսինքն երեկ՝ մինչ Մարդեղացում, և հավիտյան՝ Նարոթյունից հետո, Նիսուս նույնն է։ Այսինքն՝ Նրա Աստվածությունը երբևէ ոչ նվազել է, ոչ էլ զարգացում ունեցել, այն *invariant*¹⁰ է։ Երբ. Ա. 10-12 համարներում Նայրը Որդու մասին ասում է. «Բայց դու միշտ նույնն ես»։ Այս հարվածը մեջբերում է Սաղմ. ՃԱ. 26-28-ից, որն ուղղված է Նորը (Եսեկին), իսկ Եբրայեցիների Ա. 10-12 հարվածը վերագրում են Նիսուսին։ Այսինքն Նիսուս և Նայրը նույնն են։ Եւ ինչպես Նայրն է անփոփոխ, նույնպես և Որդին՝ Նիսուս։

Մի քանի համարներ, որոնք հաճախ շահարկում են բրուկլինյան քարոզիչները

Կողոս. Ա. 15

«Նա պարկերն է աներևույթ Աստծու, անդրանիկը բոլոր արարածների»։

Այս համարից ելնելով Եհովայի վկաները պնդում են, որ Նիսուս սրբեղծվածների անդրանիկն է, այսինքն՝ առաջին սրբեղծվածը, ծնունդը։ Իսկ այդ դեպքում նշանակում է, որ Նիսուս հրեշտակ է, իսկ եթե հրեշտակ է, ապա Միքայելն է, քանի որ Միքայել անունը եբրայերենից թարգմանաբար նշանակում է «ո՛վ է Աստծու նման»։

Բրուկլինյան թարգմանությունն այս համարը ներկայացնում է այսպես.

«Նա անսրբանականի Աստծու պարկերն է՝ բոլոր սրբեղծվածների *մեջ* անդրանիկը»։

Այս թարգմանության մեջ բրուկլինյան հրապարակիչները, ինչպես իրենք են սիրում ասել՝ հասկանալի լինելու համար, մի փոքրիկ բառ են ավելացրել՝ *մեջ*, որն անշուշտ ոչ թե հասկանալի է դարձրել փոքսպը, այլ ամբողջովին աղավաղել՝ հարմարեցնելով բրուկլինյան դավանանքին՝ այն է ցույց տալ որ Նիսուս սրբեղծված է։ Քանի որ նման կառուցվածքի դեպքում՝ *մեջ* բառը հուշում է, որ «անդրանիկ»-ը արդեն իսկ պարկանում է «սրբեղծվածների» բազմությանը և այլ բացառություն տալ հնարավոր չէ։ Մինչդեռ ոչ մի բնագիր՝ հունարենով մեզ հասած, չունի *մեջ* կապը։

Նունարենն է.

ὁς ἐστιν ἐκὼν τοῦ θεοῦ τοῦ ἀοράτου πρωτότοκος πάσης κτίσεως.

Նամեմարությունը հունարենի հետ ակնհայտորեն ցույց է տալիս, որ բրուկլինյան թարգմանությունը միպոմնավոր արած թարգմանություն է։ Իսկ *πασης*-բոլոր բառի համար և ոչ մի բառարան չի տալիս *մեջ* իմաստը¹¹։

Իսկ *πρωτότοκος πάσης κτίσεως* դարձվածքը նշանակում է ոչ թե սրբեղծվածների մեջ անդրանիկ, այլ բոլոր սրբեղծվածներից առավելը, սրբեղծվածներից նախապարիվ լինելը և ոչ՝ առաջին ծնունդը։ Դա լավագույնս երևում է Սաղմ. ՉԸ. 28 համարից.

«Ես իմ անդրանիկ որդին կդարձնեմ նրան, և բարձր՝ քան երկրի բոլոր թագավորները»։

Այսպեղ Դավթին, որը Նեսսեի կրպսեր որդին էր, Աստված անդրանիկ է հռչակում։

⁹ Երբ. ԺԳ. 8։

¹⁰ Մեծությունների անփոփոխ լինելը ցանկացած պարագայում՝ ժամանակի մեջ, ժամանակից դուրս և այլն։

¹¹ Եհովայի վկաները նման պարագայում ասում են, որ բոլոր թարգմանություններն են սխալ, իսկ երբեք եղում է կարարվում հունարեն բնագրին, շեշտում են հունարենի Westcott-Hort-ի բնագիրը։ Նշենք որ այս պարագային Կողոս. Ա. 15 համարը Nestle-Aland-ի և Westcott-Hort-ի բնագրերում չեն փոքրերվում։

«Անդրանիկ» բառը հունարենում¹² նույն *πρωτότοκος*-ն է: Նշենք նաև, որ եբրայական բնագրում רִבְּרָ – *πρωτότοκος* - ն ունի *զիսավոր, առավելություն ունենալ* իմաստը:

Հին Կրակարանում նման «փոփոխությունների» միշտ կարելի է հանդիպել: Օրինակ Նոյի պարմության մեջ.

«Նոյը սթավիկում գինությունից՝ իմացավ, թե ինչ է արել իր նկարմամբ իր կրտսեր որդին»: Այսպես ակնարկվում է Քամը, որ կրտսերը չէր, այլ միջինը որդին էր. կրտսերն էր Հաբեթը (Ծննդ. Թ. 24):

Այսինքն՝ Աստված նախապարվությունը փալիս է Հաբեթին, իսկ Քամը գրկվում է իր առավելությունից: Ծննդ. ԽԱ. 50-52-ի համեմատությունը Երեմիա IԱ. 9-ի հետ ցույց է տալիս նույն իրողությունը:

«Հովսեփն իր անդրանիկ որդու անունը դրեց Մանասե, «Որովհետև, - ասում է, - Աստված ինձ մոռացնել ցվեց իմ ու իմ հոր բոլոր վշտերը»: Երկրորդ որդու անունը անունը դրեց Եփրեմ, «Որովհետև, - ասում է, - Աստված ինձ բազմացրեց իմ փառապանքների երկրում»:

Բայց Երեմիայի մեջ Աստված ասում է.

«Քանզի Իսրայելի համար ես Հայր եղա, եւ Եփրեմն իմ անդրանիկն է»:

Այսինքն՝ Մանասեի անդրանկությունը փոխանցվեց Եփրեմին: Օգտագործված է նույն *πρωτότοκος* բառը:

Նկատենք, որ եթե Պողոս առաքյալը ուզեց ասել, որ Հիսուս առաջին սրբեղծվածն է, կօգտագործեր ոչ թե *πρωτότοκος* բառը, այլ հունարենում այդ իմաստն արտահայտող մեկ այլ բառ՝ *πρωτόκτιστος*, որը չի հանդիպում Նոր Կրակարանում:

Կողոս. Ա. 16-17

Մեր թարգմանությունն է.

«Որովհետև նրանով սրբեղծվեց այն ամենը, ինչ որ երկնքում է եւ ինչ որ՝ երկրի վրա, ինչ որ երևում է եւ ինչ որ չի երևում. թե՛ գաղեր, թե՛ փերություններ, թե՛ պեպություններ, թե՛ իշխանություններ, - ամեն ինչ նրանով եւ նրա՛ համար սրբեղծվեց, եւ նա կար առաջ, քան ամեն ինչ, եւ ամեն ինչ նրանով է կանգնած հաստատ»:

Հունարենն փեքսքն է.

ὅτι ἐν αὐτῷ ἐκτίσθη τὰ πάντα ἐν τοῖς οὐρανοῖς καὶ ἐπὶ τῆς γῆς, τὰ ὄρατα καὶ τὰ ἀόρατα, εἴτε θρόνοι εἴτε κυριότητες εἴτε ἀρχαὶ εἴτε ἑξουσίαι· τὰ πάντα δι' αὐτοῦ καὶ εἰς αὐτὸν ἐκτίσται, καὶ αὐτὸς ἐστὶν πρὸ πάντων καὶ τὰ πάντα ἐν αὐτῷ συνέστηκεν.

Բրուկլինյան հրապարակությունն այս փեքսքն ունի.

«Որովհետև նրա միջոցով սրբեղծվեցին *մնացած* բոլոր բաները երկնքում եւ երկրի վրա, փեսանելի եւ անփեսանելի բաները՝ թե՛ աթոռները, թե՛ փերությունները, թե՛ կառավարությունները եւ թե՛ իշխանությունները: Այդ ամենը սրբեղծվեցին նրա միջոցով եւ նրա համար: Նա նաև բոլոր բաներից առաջ էր, եւ *մնացած* բոլոր բաները նրա միջոցով սկսեցին գոյություն ունենալ»¹³:

Բարեխիղճ հրապարակիչները գտնե ընդգծված բառերը փակագծերի մեջ կվերցնեն, ցույց տալով համար որ դրանք չկան հունարեն բնագրերում. բերված հունարեն փեքսքը

¹² 70-ից թարգմանության մեջ:

¹³ ՆԱԹ, էջ 1763: Ընդգծումը մերն է:

նույնն է Nestle-Aland-ի և Westcott-Hort-ի հրապարակություններում: Ի՞նչ նպատակ է հեղինակը աչք մեկ մնացած բառը: Նույնը, ինչ նախորդ օրինակում: Առանց այդ *մնացած*-ի փոխարեն ասում է, որ Տիմոս սրբազաններից առաջ է, այսինքն սրբազան չէ, մինչդեռ այդ մեկ *մնացած* բառը, որ երկու անգամ ավելացրել են հրապարակիչները, ցույց է տալիս միայն մեկ բան՝ Տիմոս պարկանում է այդ *մնացած*-ների բազմությանը, այսինքն՝ սրբազան չէ:

Բրուկլինյան հրապարակիչները այդ խնդիրը լուծելու համար բերում են Ա. Կորնթ. Ը. 6 համարը, ուր օգտագործված է հունարեն *միջոցով* բառը.

ἀλλ' ἡμῖν εἷς θεὸς ὁ πατήρ, ἐξ οὗ τὰ πάντα καὶ ἡμεῖς εἰς αὐτόν, καὶ εἷς κύριος Ἰησοῦς Χριστός, δι' οὗ τὰ πάντα καὶ ἡμεῖς δι' αὐτόν.

Այսպիսի օգտագործված ծիսադրությունը, ըստ Եհովայի վկաների, Տիմոսին ստորադասում է Տիեզերքի արարչության մեջ: Եւ, շարունակելով, նրանք պնդում են, որ Կողոսացիների թղթում կարելի է հասկանալի լինելու համար *πάντα*-ն թարգմանել *մնացած բոլոր* բառերով, ինչպես Ղուկ. ԺԳ. 3-ում. «Կարծում եք, թե այն գալիլեացիները, որոնք այդպիսի պատահարների ենթարկվեցին, ավելի մեղավոր էին, քան բոլոր գալիլեացիները»: Նույնպես այսպիսի ունի նույն *πάντα* ձևը, որը, հասկանալի լինելու համար, բրուկլինյան հրապարակիչները թարգմանել են «մյուս»՝ այսինքն *մնացած բոլոր* բառերով: Եւ, եթե այս սկզբունքը ճիշդ է Ղուկասի մոտ, ճիշդ կլինի նաև Դավթի մոտ: Ոչ ավել, ոչ պակաս՝ երկաթյա փորձանմուշներով:

Մինչդեռ նման դեպքերում անպայման պիտի բնագրերում բացակա բառերը վերցնել փակագծերի մեջ, ինչը միտմունավոր չի արվել: Ավելին, Ղուկասի մոտ ամենեւին հարկ չկա *πάντα* թարգմանել *մյուս*-ով, առանց դրա էլ փոխարին անհավանական է և կարիք չունի մի բանի, որը ոչինչ չի փոխում: Սա, շախմատային լեզվով ասած, թաքնված քայլ է¹⁴, որ հեղինակը (մեր պարագայում՝ Կողոսացիների Ա. 16-17-ում) կարելի լինի ուզածը ներկայացնել որպես ճշմարտություն:

Մյուս կողմից, եթե հունարեն *δι'* նշանակում է ստորադասություն Տիմոսի պարագային, ապա ի՞նչ կարելի ասել այդ նույնը այն համարների մասին, ուր օգտագործված է այդ նույն *δι'* բառը, օրինակ՝ Տիմ. ԺԱ. 36, Եբր. Բ. 10 համարների համար, ուր Աստված Իր մասին է ասում՝ *δι'* նախորդով: Ինքն իրեն ստորադասում է - nonsense !

Եսայի ԽԴ. 24-ում կարդում ենք. «Ես եմ Տերը, որ անում, կարարում եմ ամեն ինչ, միայնակ փարածեցի երկինքը և հասարակեցի երկիրը»: Ներկայումս, եթե մեկի միջոցով է արարվում Տիեզերքը, ապա այդ մեկը նույն ինքն է: Նենց սա է այն սկզբունքը, որի համաձայն Տիմ. Կրակարանի 777 (Եսայի)-ն նույն Տիմոսն է:

Կողոսացիների այս մի բանի համարի բնությունը և բրուկլինյան թարգմանության հետ համեմատությունը ցույց է տալիս, որ Եհովայի վկաների ներկայացրած հրապարակությունը մի լավագույն օրինակ է բոլոր թարգմանիչների համար, թե ինչպես պետք չէ թարգմանել:

(Շարունակելի)

Տ. ՂԵԻՌՆԴ ՔԱՆԱԿԱ ՄԱՅԻՆՅԱՆ

¹⁴ Արարարը ամենաս թվացող քայլ, որ ոչ մի բան չի փոխում խաղին, բայց մի բանի քայլ հետո պարզվում են դրա նպատակն ու հետեանքները: